նեցան 'ի Յոպպէ և անտի 'ի նաւ. չեւ եւս հասեալ նոցա 'ի Կիպրոս, ելին 'ի ճանապարհ և միաբանք Յունաց՝ անձինք 13. և մտեալ 'ի նաւակ ինչ նաւեցին յԱքքէ և անտի 'ի Կոստանդինուպոլիս։

Եհաս Գաբուճի Պաշին 'ի Յոպպէ՝ ընդ ճարտարապետին Յունաց (Մայիս 5) և անտի ելին յԵրուսաղէմ, և գնացին 'ի վանս Յունաց. և զկնի դադարելոյ զաւուրս ինչ՝ կոչեաց առ ինքն զԹարգմանս Հայոց և Լատինաց. և յայցելութեան իւրում 'ի վանօրայս՝ սիրով և քաղցրութեամբ ասէր, ունիմ հրաման յԱրքայէ չինել զամենայն բաժին տեղիս ազգաց 'ի տաճարին Ս. Յարութեան։ Եւ մեկնեալ 'ի տեղի իւր՝ խնդրեաց զՀին հրովարտակս Հայոց. բայց նոքա արարին պատասխանի, չեւ իմացեալ մեր զմիտս եկեալ հրովարտակին, ոչ կարեմք յայտնել զայնս, զնոյն ասացին և Լատինք, և յորդոր եւս լինէին Հայոց չաճապարել, այլ լռութեամբ սպասել վախճանի գործոյն։ Սակայն Յոյնք և վերատեսուչ գործոյն ապասէին գալստեան Նորոյ Դատաւորին. և ահա եկն և եմուտ նա յԵրուսաղէմ ('ի 12 Յունիսի) և զկնի երից աւուրց ժողովեցան առ նա գլխաւորք այլազգեաց, Յոյնք և վերատեսուչն. 'ի Հայոց և 'ի Լատինաց ոչ ոք երեւեցաւ անդ։ Սակայն Յոյնք ընթեռնուլ զհրովարտակն, այլ այլազգիք ասէին՝ թէ չէ օրէն առանց գրի Կուսակալին Դամասկոսի ընթեռնուլ զայն, յոյր վասն առաքեցին զումանս բերել գիր անտի։ Դարձեալ ժողովեցան անդ ընթեռնուլ զհրովարտակն ('ի 22 Յունիսի), այլ ոչ հանին յերեւան զգիր Կուսակալին, թէեւ պնդէին Յոյնք թէ բերեալ են. ուստի ոմանք ասէին ընթեռնուլ՝ և ոմանք 'ի քննութիւն ելանել. եւ 'ի լինիլ տարաձայնութեան ցրուեցան ('ի 23 Յունիսի)։ Եհաս մեծ նաւն Յունաց 'ի Յոպպէ, յորում էին նիւթք չինութեան, և գործաւորք 150, որ և հանին զամենեսեան արտաքս, և զկնի երից աւուրց Մէհէմմէտ աղա Յոպպէի՝ ըստ ազգ արարելոյ Սիւլէյման Բգեչիի Աքքէի, գրաւեաց տումարաւ զամենայն կարասիս, զորս հանին 'ի նաւէն, և լցեալ զնոսա 'ի մթերանոցս՝ պահեաց առ ինքն զբանալիս նոցին, և զգործաւորսն արձակեաց յԵրուսաղէմ իբրեւ ուխտաւոր՝ առեալ 'ի նոցանէ զտուրս Դափարին, եւ խնդութիւնն